ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---- սեպտեմբերի 2009 թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի «ա»-«ե» կետերով և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա»-«ե» և 14-րդ հոդվածի «ա»-«է» կետերով սահմանված գործառույթների իրականացման լիազորությունները:

2.Սույն որոշման 1-ին կետով Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակված լիազորությունների կատարման վերահսկումը իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ՝ Երևանի քաղաքապետ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է քաղաքացիական և բնակչության պաշտպանությանը վարչական շրջանների ղեկավարների մշտական մասնակցության ապահովումը, որը կխթանի համապատասխան գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունում չի առաջացնում ավագանու այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ